Անկախ գնահատողի կարծիք
Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակի վերաբերյալ

Second-Party Opinion
Reviewed by: MORNINGSTAR | SUSTAINALYTICS

Գնահատման ամսաթիվ՝ Նոյեմբերի 4, 2024թ
Տրման վայր՝ Երևան, Հայաստան

Գնահատման ամփոփում

Sustainalytics-ը, որպես անկախ գնահատող, եզրահանգում է, որ Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը կամ շրջանակային փաստաթուղթը համապատասխանում է 2024թ.-ի Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին: Այս գնահատականը հիմնված է հետևյալ դրույթների վրա՝

- **Հիմնական Կատարողական Ցուցանիշներ** Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակում՝ փաստաթղթում սահմանված են հետևյալ ՀԿՑ-ները
  i) ՀԿՑ 1ա. ՋԳ արտանետումներ՝ բացարձակ թվով (Շրջանակ 1 և 2):

  ii) ՀԿՑ 1բ ՋԳ արտանետումներ՝ բացարձակ թվով (Շրջանակ 3) (տե՛ս աղյուսակ 1): Sustainalytics-ը համարում է, որ սահմանված ՀԿՑ-ները **շատ ազդեցիկ** են՝ էականության, ոլորտին համապատասխանելիության, կիրառելիության և նույնատիպ բիզնես ոլորտի հենանիշերի հետ համադրելիության տեսակետից:

- **Սահմանված թիրախներ** Sustainalytics-ը համարում է, որ Ընկերության կողմից սահմանված թիրախները համահունչ են և բխում են Տելեկոմ Արմենիայի որդեգրած Կայուն զարգացման ռազմավարությունից: Sustainalytics-ն համարում է, որ սահմանված թիրախները **խիստ հավակնոտ են**՝ համադրելով դրանք նույն ոլորտում գործող ընկերությունների կողմից սահմանված թիրախների և SBTi հենանիշերի հետ:

- **Պարտատոմսերի բնութագիրը** Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի պարտատոմսերի ֆինանսական բնութագրերը ուղիղ կախվածության մեջ են սահմանված թիրախներին հասնելու և դրանք հաշվետվության տեսքով ներկայացնելու Ընկերության հանձնառությունից: Սահմանված երկու թիրախներին չհասնելու և/կամ հաշվետվություններ չներկայացնելու դեպքում Ընկերությունը պարտատերերին կվճարի պարտատոմսի նախապես սահմանված արժեկտրոնային տոկոսադրույքը կամ համարժեք գումարի չափով հավելավճարը:

- **Հաշվետվողականություն** Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն պարտավորվում է իր տարեկան հաշվետվության մեջ յուրաքանչյուր տարի ներկայացնել ՀԿՑ-ների կատարողականի վերաբերյալ տվյալներ՝ ներառյալ այն պայմանները կամ իրավիճակները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ՀԿՑ-ներին հասնելու գործում՝ հնարավորություն ընձեռելով ներդրողներին մշտադիտարկելու սահմանված թիրախների հավակնոտության աստիճանը:

- **Վերահսկողություն.** Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն պարտավորվել է առնվազն տարին մեկ անգամ յուրաքանչյուր ՀԿՑ-ի և սահմանված թիրախների համար կազմակերպել արտաքին վերահսկողություն՝ երրորդ կողմի ներգրավմամբ:

Թիրախները նպաստում են հետևյալ ԿԶՆ-ներին՝

ՀԿՑ-ների և Թիրախների գնահատում

ՀԿՑ	Բազային տվյալի տարի	ՀԿՑ-ի գնահատված ազդեցություն	Թիրախ	Թիրախի գնահատված հավակնոտություն
ՀԿՑ 1ա. ՋԳ արտանետումներ (tCO2e) բացարձակ թվով (Շրջանակ 1 և 2)	2023	**Շատ ազդեցիկ**	**Թիրախ 1ա** մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել ՋԳ արտանետումները (Շրջանակ 1 և 2): **Միջանկյալ թիրախ.** մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 20%-ով կրճատել ՋԳ արտանետումները (Շրջանակ 1 և 2):	**Խիստ հավակնոտ**
ՀԿՑ 1բ ՋԳ արտանետումներ (tCO2e) բացարձակ թվով (Շրջանակ 3)	2023	**Շատ ազդեցիկ**	**Թիրախ 1բ** Մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել ՋԳ արտանետումները (Շրջանակ 3): **Միջանկյալ թիրախ**. մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 20%-ով կրճատել ՋԳ արտանետումները (Շրջանակի 3-ի գնված ապրանքներ և ծառայություններ կատեգորիայի հետ կապված արտանետումները):	**Խիստ հավակնոտ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գնահատման ամփոփում 1
ՀԿՑ-ների և թիրախների գնահատում 1
Աշխատանքի շրջանակ և սահմանափակումներ 3
Ներածություն 4
Անկախ գնահատողի կարծիքը 5
Բաժին 1 Համապատասխանությունը կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին 5
Հիմնական կատարողական ցուցանիշների ընտրություն 5
Թիրախների սահմանում 6
Պարտատոմսերի բնութագրեր 8
Հաշվետվողականություն 9
Վերահսկողություն 9
Բաժին 2 Տելեկոմ Արմենիայի Կայուն զարգացման ռազմավարության գնահատում 9
Բաժին 3 Թիրախների ազդեցիկությունը 11
Եզրակացություն 12

Աշխատանքի շրջանակ և սահմանափակումներ

2024 թվականի նոյեմբեր ամսին Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն ներգրավել է Sustainalytics ընկերությանը որպես անկախ գնահատողի՝ իր Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը կամ շրջանակային փաստաթուղթը (այսուհետ՝ «Շրջանակ») գնահատելու և Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին (SLBP) վերջինիս համապատասխանության վերաբերյալ անկախ կարծիք տրամադրելու նպատակով[1]

Sustainalytics-ի գնահատումը դա ընկերության անկախ կարծիքն է Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակային փաստաթղթի համապատասխանության վերաբերյալ Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին (SLBP 2024), որը կառավարվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) կողմից:

Աշխատանքի ընթացքում Sustainlytics-ը պահանջել և ստացել է համապատասխան տեղեկատվություն Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի ներկայացուցիչներից՝ վերջինիս բիզնես գործընթացների կայունության և ազդեցության, ինչպես նաև թիրախների սահմանման ու շրջանակային փաստաթղթում նշված հաշվետվությունների ներկայացման և երրորդ կողմի վերահսկողության գործընթացները հասկանալու համար: Տելեկոմ Արմենիայի ներկայացուցիչները հաստատել են, որ

(1) վերջիններս գիտակցում են, որ տրամադրված տեղեկատվության ամբողջականությունը, ճշմարտացիությունը և արդիականությունը թողարկողի պարտավորությունն է:

(2) Վերջիններս պարտավոր են Sustainalytics-ին ապահովել լիարժեք տեղեկատվությամբ:

(3) Տրամադրված կիրառելի տեղեկատվությունը պիտի տրամադրվի պատշաճ կերպով և ժամանակին:

Sustainalytics-ը ուսումնասիրել է նաև Ընկերության վերաբերյալ հանրայնացված մի շարք փաստաթղթեր, ինչպես նաև հանրությանը ոչ հասանելի և Ընկերության վերաբերյալ ոչ հրապարակային տեղեկատվություն: Այս փաստաթղթում ներկայացված է շրջանակային փաստաթղթի վերաբերյալ Sustainalytics-ի կարծիքը, և այն պետք է ընթերցվի նշյալ փաստաթղթի հետ միասին: Սույն գնահատման ցանկացած վերանայում պետք է իրականացվի Sustainalytics-ի և Տելեկոմ Արմենիայի միջև ըստ նախապես համաձայնեցված աշխատանքային պայմանների: Sustainalytics-ի կարծիքը գնահատում է շրջանակային փաստաթղթի համապատասխանությունը ներկայիս շուկայի չափանիշներին, սակայն չի երաշխավորում հետագայում հրապարակված կամ հետագայում թարմացված ստանդարտներին համապատասխանությունը: Բացի այդ, Sustainalytics-ի կարծիքը անդրադառնում է սահմանված թիրախներին, սակայն չի չափում ՀԿՑ-ների նկատմամբ առաջընթացը: Այս կարծիքը վավեր է շրջանակային փաստաթղթում նշված բոլոր այն թողարկումների համար, քանի դեռ տեղի չի ունեցել հետևյալ իրադարձություններից որևէ մեկը. ա) արտաքին հենանիշերի էական փոփոխություն, որոնց համադրությամբ թիրախները սահմանվել են բ) նշանակալի կորպորատիվ փոփոխություն (օրինակ՝ խոշոր միաձուլում, ձեռքբերում կամ բիզնես գործունեության փոփոխություն), որն առնչություն ունի թիրախներին հասնելու կամ ՀԿՑ-ների իրականացման հետ:

ՀԿՑ-ների և թիրախների չափումներն ու հաշվետվություններ ներկայացնելը Շրջանակի սեփականատիրոջ պարտականությունն է: Sustainalytics-ի կողմից այս գնահատման մեջ ներկայացված որևէ տեղեկություն չպետք է մեկնաբանվի որպես հայտարարություն, երաշխիք կամ փաստարկ՝ հօգուտ կամ ընդդեմ այն տվյալների, տեղեկատվության կամ հայտարարությունների և հարակից հանգամանքների, ինչպես նաև համարվի վերը նշված փաստաթղթերի ճշմարտացիության հավաստում, որոնք Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն տրամադրել է Sustainalytics-ին՝ անկախ գնահատողի կարծիքը կազմելու նպատակով:

Հարցերի դեպքում ստորև ներկայացված են Կորպորատիվ լուծումների ծրագրի թիմի կոնտակտային տվյալները՝

Տիտուս Վիլչես (Ամստերդամ)
Ծրագրի ղեկավար
titus.vilches@morningstar.com
(+31) 20 797 1563

Շիգա Վու (Ամստերդամ)
Ծրագրի օգնական
siga.wu@morningstar.com

Նատալյա Գոտիշան (Ամստերդամ)
Ծրագրի օգնական
natalia.gotishan@morningstar.com

Էնդրյու Ջոնսոն (Փարիզ)
Հաճախորդների հետ կապեր
susfinance.emea@sustainalytics.com (+44) 20 3880 0193

[1] Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքները Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի պատասխանատվության դաշտում են և հասանելի են այս հղմամբ՝ https://www.icmagroup.org/sustainable-finance/the-principles-guidelines-and-handbooks/sustainability-linked-bond-principles-ԿԿՊՍ/

[2] Տարբեր բիզնես գործունեությունների գնահատումներ կատարելիս Sustainalytics-ը հիմնաքարային է համարում օբյեկտիվ հետազոտության անցկացումն ու վերլուծաբանների անկախության ապահովումը, որը կարևոր է օբյեկտիվ և անաչառ հետազոտություն կատարելու համար: Հետևաբար, Sustainalytics-ը մշակել և գործարկել է շահերի բախման և կոնֆլիկտների կառավարման շրջանակ, որն ապահովում է վերլուծաբանների անկախության, գործընթացի հետևողականության, հետազոտությունն իրականացնող և կոմերցիոն թիմերի կառուցվածքային տարանջատման, տվյալների պաշտպանության և համակարգերի տարանջատման անհրաժեշտություն: Բացի այդ, վերլուծաբանների աշխատանքի դիմաց փոխհատուցումն ուղղակիորեն կապված չէ գրանցված կոմերցիոն պատվերների արդյունքների հետ:

Ներածություն

Թիմ Տելեկոմ Արմենիան («Տելեկոմ Արմենիա ԲԲԸ» կամ «Ընկերություն») հեռահաղորդակցության ոլորտում գործող կոմերցիոն և ցուցակագրված ընկերություն է, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, Հայաստանում: Ընկերությունը Հայաստանում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում է բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ և թվային հեռուստատեսության ծառայություններ:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (այստեղ նշված նաև որպես «Թիմ Տելեկոմ Արմենիա» կամ «Ընկերություն») Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտում գործող կոմերցիոն և ցուցակագրված ընկերություն է, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, Հայաստանում: Ընկերությունը տրամադրում է բջջային և ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային և ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:Նախկինում հայտնի լինելով որպես ՎԵՌՆ Արմենիա՝ Ընկերությունը ԹԻՄ ՓԲԸ կողմից 2020 թվականին գնվելուց հետո վերաբրենդավորվել է: Տելեկոմ Արմենիան ունի 1900 աշխատող և սպասարկում է շարժական կապի 1 միլիոն և ֆիքսված կապի 300,000 բաժանորդի:

Ընկերությունը նախատեսում է թողարկել Կայուն զարգացման պարտատոմսեր, որոնց ֆինանսական բնութագրերը, ինչպիսիք են արժեկտրոնի տոկոսադրույքի ավելացումը կամ հավելավճարի վճարումը ներդրողներին, կապված են Ընկերության ջերմոցային գազերի արտանետումների երկու ՀԿՑ-ների և սահմանված թիրախներին հասնելու կամ չհասնելու հետ:
Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն ներգրավել է Sustainalytics անկախ գնահատողին՝ իր Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը կամ շրջանակային փաստաթուղթը (այսուհետ՝ «Շրջանակ») գնահատելու և Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին (SLBP) վերջինիս համապատասխանության վերաբերյալ անկախ կարծիք տրամադրելու նպատակով[1]

Նշյալ շրջանակը կհրապարակվի առանձին փաստաթղթի տեսքով[3]

Տելեկոմ Արմենիան սահմանել է հետևյալ ՀԿՑ-ները և թիրախները

Աղյուսակ 1: ՀԿՑ-ի սահմանումը

ՀԿՑ	Սահմանում
ՀԿՑ 1ա ԶԳ արտանետումներ (tCO2e) Շրջանակ 1 և 2, բացարձակ թվով	ՀԿՑ 1ա-ն դա Ընկերության Շրջանակ 1 և 2 ԶԳ արտանետումներն են, որոնք չափվում են CO2 - տոննա համարժեքով և հաշվարկվում են ԶԳ հաշվարկման ստանդարտի համաձայն[4]: ՀԿՑ 1ա-ն ներառում է Ընկերության սեփականություն հանդիսացող և իր կողմից վերահսկվող գործընթացների ուղղակի մթնոլորտային արտանետումները (բազային կայաններ, վաճառքի և սպասարկման գրասենյակներ, ավտոմատ հեռախոսակայաններ, գրասենյակային շենքեր, պահեստներ և ավտոպարկ), ինչպես նաև սպառված էլեկտրաէներգիայի, գոլորշու, տաքացման և սառեցման սարքավորումների օգտագործումից Ընկերության անուղղակի արտանետումները:
ՀԿՑ 1բ ԶԳ արտանետումներ (tCO_2e) Շրջանակ 3, բացարձակ թվով	ՀԿՑ 1բ-ն ներառում է Ընկերության Շրջանակ 3 ԶԳ արտանետումները, որոնք չափվում են CO2 - տոննա համարժեքով և հաշվարկվում են ԶԳ հաշվարկման ստանդարտի համաձայն[5] ՀԿՑ 1բ-ն ներառում է Ընկերության մատակարարման շղթայում առաջացող անուղղակի արտանետումները և ներառում է հետևյալ չորս կատեգորիաները, համաձայն ԶԳ ստանդարտի՝ • Կատեգորիա 1 (գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումներ), • Կատեգորիա 3 (վառելիքի և էներգիայի սպառման հետ կապված արտանետումներ), • Կատեգորիա 5 (գործունեության ընթացքում առաջացած թափոններից արտանետումներ), • Կատեգորիա 11 (վաճառված ապրանքների օգտագործումից արտանետումներ):

Աղյուսակ 2 Սահմանված Թիրախներ և բազային տարվա կատարողական

ՀԿՑ	2023 (բազային)	Թիրախ 2029
ՀԿՑ 1ա ՋԳ արտանետումներ (tCO2e) Շրջանակ 1 և 2, բացարձակ թվով	19,559.1tCO2e	**Թիրախ 1ա** մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել ջերմոցային գազերի արտանետումները Շրջանակ 1 և 2-ից: **Միջանկյալ թիրախ**. մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 20%-ով կրճատել ջերմոցային գազերի արտանետումները Շրջանակ 1 և 2-ից:
ՀԿՑ 1բ ՋԳ արտանետումներ (tCO2e) Շրջանակ 3, բացարձակ թվով	15,880.2 tCO2e	**Թիրախ 1բ** Մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել ՋԳ արտանետումները Շրջանակ 3-ից: **Միջանկյալ թիրախ**. մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 20%-ով կրճատել Շրջանակ 3-ի 1-ին կատեգորիայի՝ գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումները:

[3] Տելեկոմ Արմենիայի Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը կամ շրջանակային փաստաթուղթը կհրապարակվի Ընկերության վեբկայքում այս հղմամբ՝ https://www.telecomarmenia.am/en/sustainable-development/

[4] ՋԳ Ստանդարտ «Կորպորատիվ հաշվառման և հաշվետվողականության ստանդարտ: Վերանայված հրատարակություն» https://ghgprotocol.org/corporate-standard

[5] Տե՛ս նույն տեղում

Sustainalytics-ի կարծիքը

Բաժին 1 Համապատասխանությունը Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին

Sustainalytics-ի կարծիքով Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը համահունչ է 2024 թվականի Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքների հինգ հիմնական բաղադրիչներին:

Հիմնական կատարողական ցուցանիշների ընտրություն

ՀԿՑ-ների համապատասխանությունը և էականությունը

ՀԿՑ-ի էականությունն ու համապատասխանությունը գնահատելիս Sustainalytics-ը հաշվի է առնում՝ ա) արդյոք ցուցանիշը ներառում է թողարկողի գործունեության ազդեցությունը բնապահպանական կամ սոցիալական հարցերի վրա, և բ) որքանով է ՀԿՑ-ն կիրառելի ցուցանիշ Ընկերության գործունեության մեջ:

<u>ՀԿՑ 1ա Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումներ (tCO2e) և ՀԿՑ 1բ. Շրջանակ 3 ՋԳ արտանետումներ (tCO2e)</u>

Sustainalytics-ը այս ՀԿՑ-ների գնահատումը կատարել է համակցված մեթոդով՝ հաշվի առնելով, որ սահմանված ՀԿՑ-ները հասցեագրում են Տելեկոմ Արմենիայի՝ որպես էներգասպառող ոլորտի ջերմոցային գազերի արտանետումների խնդիրը: Sustainalytics-ը սահմանված ՀԿՑ-ները հեռահաղորդակցության ոլորտի համար համարում է էական և համապատասխան ընտրված՝ հաշվի առնելով, որ.

- Sustainalytics-ի ESG ռիսկերի ցանկում Անմիջական գործառնություններ/ Carbon – Own Operations-ը[6] հեռահաղորդակցության ոլորտի համար սահմանված են որպես նյութական և լուծում պահանջող խնդիր: Հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների համար հրատապ խնդիր է էլեկտրաէներգիայի անխափան սնուցման ապահովումը՝ մալուխներով, անջատիչներով, բազային կայանների, աշտարակների և տվյալների կենտրոնների միջոցով գործունեության ապահովման համար[7]

- Կայուն զարգացման հաշվառման ստանդարտների խորհուրդը (ԿԶՀՍԽ, SASB) էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ու դրա գրագետ կառավարումը սահմանել է որպես հեռահաղորդակցության ոլորտի կարևոր խնդիր: Այդ ստանդարտը նաև ընդգծում է հեռահաղորդակցության ընկերությունների կողմից մեծածավալ էլեկտրաէներգիայի սպառման հետևանքով շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը, ինչպիսին է օրինակ կլիմայի փոփոխությունը, հասցեավորելու կարևորությունը[8]

- Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները կազմում են հեռահաղորդակցության ոլորտի բոլոր ՋԳ արտանետումների շուրջ 75%-ը, ընդ որում՝ Կատեգորիա 1-ին (գնված ապրանքներ և ծառայություններ), 2-ին (կապիտալ ապրանքներ), 3-ին (վառելիքի և էներգիայի հետ կապված գործողությունների արտանետումներ), 11-ին (վաճառված ապրանքների օգտագործումից արտանետումներ) և 15-ին (ներդրումներ) բաժին է ընկնում Շրջանակ 3 արտանետումների շուրջ 90%-ը[9]
- Կիրառելիության տեսանկյունից ՀԿՑ 1ա-ն ներառում է Ընկերության գործունեության արդյունքում արտանետված ջերմոցային գազերը, որոնք 2023 թվականին կազմել են Տելեկոմ Արմենիայի Շրջանակ 1, 2 և 3 արտանետումների շուրջ 50%-ը: ՀԿՑ 1բ-ն ներառում է Շրջանակի 3 արտանետումները՝ գնված ապրանքներից և ծառայություններից (Կատեգորիա 1), վառելիքի և էներգիայի հետ կապված արտանետումները (Կատեգորիա 3), գործունեության արդյունքում առաջացած թափոնների արտանետումները (Կատեգորիա 5) և վաճառված ապրանքների օգտագործումից արտանետումները (Կատեգորիա 11), որը կազմում է Ընկերության 2023 թվականի Շրջանակ 3 արտանետումների շուրջ 81%-ը կամ նույն տարվա Շրջանակ 1, 2 և 3 ընդհանուր արտանետումների 41%-ը: Ընդհանուր առմամբ, ՀԿՑ 1ա-ն և 1բ-ն ներառում են Տելեկոմ Արմենիայի 2023 թվականի ՋԳ ընդհանուր արտանետումների շուրջ 91%-ը, ինչը վկայում է Ընկերության գործունեության մեջ դրանց կիրառելիության բարձր աստիճանի մասին[10]

ՀԿՑ բնութագրերը

[6] Sustainalytics-ի Carbon – Own Operations MEI/ Անմիջական գործառնությունների ՍԳՑ-ն վերաբերում է ընկերության ռիսկերի կառավարմանը, որոնք կապված են իր գործունեությունն ապահովող էներգասպառման Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումների հետ: Ներառում է նաև Շրջանակ 3-ի որոշ կատեգորիաներ

[7] Sustainalytics-ի Հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտի վերաբերյալ աշվետվություն (2023)

[8] SASB Materiality Finder, Telecommunications Services, հասանելի է՝ https://sasb.ifrs.org/standards/materiality-finder/find/?industry[]=TC-TL

[9] GSMA, «Mobile Net Zero 2024. Ոլորտի գնահատումը կլիմայի փոփոխության դեմ պայքարում» (2024) https://www.gsma.com/betterfuture/wp-content/uploads/2024/02/Mobile-Net-

Zero-2024-State-of-the-Industry-on-Climate-Action-1.pdf

10 Տելեկոմ Արմենիան տեղեկացրել է Sustainalytics-ին, որ Կապիտալ ապրանքներից (կատեգորիա 2) Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները կազմել են Ընկերության ընդհանուր արտանետումների շուրջ 9.3%-ը: Այս արտանետումները ներառված չեն ՀԿՑ 1բ -ում:

ՀԿՑ-ի բնութագրերը գնահատելու ընթացքում Sustainalytics -ը հաշվի է առնում հետևյալ պարամետրերը՝ ա) արդյոք օգտագործվել է հստակ և հետևողական մեթոդաբանություն բ) արդյոք այն ունի միջազգային ճանաչված սահմանում գ) արդյոք ՀԿՑ-ն ունի էական ազդեցություն Ընկերության գործունեության ընթացքում բնապահպանական կամ սոցիալական խնդրի վրա[11] և դ) արդյոք ընտրված մեթոդաբանությունը համադրելի է ոլորտի այլ արտաքին հենանիշերի հետ[12]

Sustainalytics-ը համարում է, որ Տելեկոմ Արմենիայի՝ ՀԿՑ 1ա-ի և ՀԿՑ 1բ-ի սահմանումը և մեթոդաբանության հաշվարկը կատարված են պարզ և հասկանալի կերպով: Նշենք, որ Ընկերությունը Շրջանակ 1 և 2 արտանետումների հաշվարկը սկսել է 2022 թվականից, իսկ Շրջանակ 3 արտանետումների հաշվարկը՝ 2023 թվականից: Երկու ՀԿՑ-ներն էլ սահմանված են ՋԳ Կորպորատիվ հաշվետվության ստանդարտներին համապատասխան՝ համաձայն սահմանված մեթոդաբանության:

Ավելին, Sustainalytics-ը գտնում է, որ ՀԿՑ-ները համադրված են գիտականորեն հիմնավորված այնպիսի միջազգային չափանիշների հետ, ինչպիսին է, օրինակ Science Based Targets Initiatives (SBTi)- ի սահմանած միջոլորտային ՋԳ բացարձակ նվազեցումների մեթոդը[13]: Ի լրումն, Sustainalytics-ը նաև գտնում է, որ սահմանված երկու ՀԿՑ-ները ուղղակիորեն բխում են Ընկերության կողմից իր ՋԳ արտանետումների պարբերաբար վերահսկողության հանձնառությունից:

Ընդհանուր գնահատում

Sustainalytics-ը Ընկերության կողմից սահմանած ՀԿՑ 1ա-ն և ՀԿՑ 1բ-ն համարում է շատ ազդեցիկ հաշվի առնելով, որ դրանք՝ ա) Ընկերության գործունեության բնապահպանական կատարողականի ուղղակի և էական չափումներն են բ) ունեն կիրառելիության լայն շրջանակ գ) սահմանված են հստակ և միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությամբ, և դ) ենթակա են համեմատական վերլուծության:

ՀԿՑ	ՀԿՑ -ի գնահատված ազդեցիկությունը			
ՀԿՑ 1ա ՋԳ արտանետումներ բացարձակ թվով Շրջանակ 1 և 2	Համապատասխանեցված չեն	Բավարար	Ազդեցիկ	Շատ ազդեցիկ
ՀԿՑ 1բ ՋԳ արտանետումներ բացարձակ Շրջանակ 3	Համապատասխանեցված չեն	Բավարար	Ազդեցիկ	Շատ ազդեցիկ

Սահմանված թիրախներ

Համապատասխանությունը Տելեկոմ Արմենիայի Կայուն զարգացման ռազմավարությանը

Տելեկոմ Արմենիան իր ՀԿՑ-ների համար սահմանել է հետևյալ թիրախները՝

- Թիրախ 1ա մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 1 և 2 -ի ՋԳ արտանետումները կրճատել 40%-ով 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցումը:
- Թիրախ 1բ մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները 2023 թվականի բազային ցուցանիշի համեմատ կրճատել 40%-ով, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը գնված ապրանքներից և ծառայությունների արտանետումների նվազեցումը 20%-ով:

Sustainalytics-ի կարծիքով սահմանված թիրախները համահունչ են Տելեկոմ Արմենիայի կայուն զարգացման ռազմավարությանը:

Իր կայուն զարգացման ռազմավարության շրջանակներում Տելեկոմ Արմենիան հանձնառու է նվազեցնել շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունն ու հնարավորինս կրճատել իր բիզնես գործունեության արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումները՝ միաժամանակ աջակցելով Հայաստանի Հանրապետությանը հասնելու Փարիզի համաձայնագրով ստանձնած կլիմայի փոփոխության կանխարգելման պարտավորություններին:

Սահմանված թիրախները նաև բխում են Տելեկոմ Արմենիայի կողմից սահմանած երկարաժամկետ ռազմավարական նպատակներից, այն է՝ մինչև 2050 թվականը լիարժեք անցում կատարել վերականգնվող էներգիայի աղբյուրների և իր գործունեության ընթացքում հասնել զրոյական արտանետումների[14]

Տելեկոմ Արմենիայի Կայուն զարգացման ռազմավարության վերլուծությունը ներկայացված է Բաժին 2-ում:

Թիրախներին հասնելու ռազմավարությունը

11 ցույց է տալիս կատարողականի չափանիշ կամ ազդեցություն էական ԲՍԿ խնդրի վրա:
12 ստանդարտներ կամ հղումներ են, որոնք ստեղծվել են ճանաչված երրորդ կողմ հանդիսացող կազմակերպությունների կողմից՝ համադրությունը հեշտացնելու համար:
13 ԳՀԹԼ/SBTi, «SBTi Կորպորատիվ չափանիշներ» (2024), հասանելի է՝ https://sciencebasedtargets.org/resources/files/SBTi-criteria.pdf
14 Տելեկոմ Արմենիան իր կայուն զարգացման ռազմավարությունը ներկայացրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:

Տելեկոմ Արմենիան նախատեսում է սահմանված թիրախներին հասնել հետևյալ ռազմավարության միջոցով.

Թիրախ 1ա

մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 1 և 2 -ի ՋԳ արտանետումները կրճատել 40%-ով 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցումը:

- **Բարձրացնել SS և ցանցային համակարգերի էներգարդյունավետությունը,** հետևյալ քայլերով՝ ա) անցում կատարել էներգաարդյունավետ սարքավորումների (սերվերներ, երթուղիչներ և անջատիչներ), որոնք կունենան Energy Star կամ այլ համարժեք հավաստագիր բ) ավելացնել տվյալների կենտրոնի էներգարդյունավետությունը՝ օպտիմալացնելով հովացման համակարգերը, կատարելով էներգասպառման չափումներ, կիրառել համակարգերի կառավարման առաջադեմ մեթոդներ և տեխնիկա դ) կատարել էներգասպառման պարբերական մշտադիտարկում՝ էներգիայի օգտագործումը Ընկերության SS համակարգերում և ցանցային գործառնություններում օպտիմալացնելու նպատակով ե) շահագործումից հանել և անցում կատարել նոր տեխնոլոգիաների՝ պղնձե մալուխները փոխարինելով էներգաարդյունավետ օպտիկամանրաթելերով, ավանդական լամպերը՝ LED լուսավորությամբ, և զ) իրազեկել և վերապատրաստել Ընկերության աշխատակիցներին էներգախնայող գործելակերպի վերաբերյալ՝ վարչական շենքերում և գրասենյակներում էլեկտրաէներգիայի սպառումը նվազեցնելու նպատակով:
- **Կրճատել ավտոպարկի արտանետումները**. Ընկերության ավտոպարկում ավելացնել էլեկտրական մեքենաների մասնաբաժինը՝ փոխարինելով գոյություն ունեցող մեքենաների ավտոպարկը էլեկտրական մեքենաներով
- **Անցում կատարել վերականգնվող էներգիայի աղբյուրների**՝ ա) ընկերության տեխնիկական ենթակառուցվածքի էներգասնուցումը ապահովել արևային էներգիայի աղբյուրներով, ներառյալ ավտոմատ հեռախոսային կայանները բ) տվյալների կենտրոններում, ըստ հնարավորության, ապահովել անխափան սնուցում վերականգնվող էներգիայի աղբյուրներով գ) ձեռք բերել էլեկտրաէներգիա վերականգնվող էներգիայի այլ աղբյուրներից՝ օգտվելով շուկայի ազատականացումից (այդ թվում՝ հիդրոէներգետիկա):

Թիրախ 1բ

մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները 2023 թվականի բազային ցուցանիշի համեմատ կրճատել 40%-ով, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը գնված ապրանքներից և ծառայությունների արտանետումների նվազեցումը 20%-ով:

- **Անցում շրջանաձև տնտեսության սկզբունքներին**, հետևյալ քայլերի միջոցով՝ ա) մշակել և իրականացնել բաժանորդների տեխնիկական սարքերի վերադարձի և վերամշակման նախագծեր բ) բաժանորդագրության դադարեցման դեպքում հավաքագրել բաժանորդների սարքերի առնվազն 50%-ը, ինչպիսիք են օրինակ երթուղիչները և Wi-Fi սարքերը գ) կրկնօգտագործել շահագործումից հանված ցանցային սարքավորումները, և դ) խթանել Ընկերության ներսում վերանորոգված սարքավորումների օգտագործումը:
- **Անցում կայուն գնումների գործընթացի**. Տելեկոմ Արմենիան հանձնառու է իր բիզնես գործընկերներին և հիմնական մատակարարներին ներգրավել Ընկերության կայուն զարգացման թիրախներին հասնելու գործընթացում, աջակցելով վերջիններիս դեկարբոնացման ջանքերին և առաջնահերթություն տալով այն մատակարարներին, ովքեր կիրականացնեն սեփական արտանետումների նվազեցման նախաձեռնություններ: Ընկերությունը նաև մտադիր է մատակարարների հետ պայմանագրերում ներառել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրույթներ, որը կներառի նաև վերջիններիս արտանետումների վերաբերյալ տվյալների հանրայնացում, ինչպես նաև վաճառվող ապրանքների կենսացիկլի գնահատում: Ի լրումն, Ընկերությունը նախատեսում է խրախուսել իր մատակարարներին կիրառելու շրջանաձև տնտեսության մոտեցումներ, ինչպիսիք են թափոնների նվազեցումը և նյութերի կրկնակի օգտագործումը՝ արտադրանքի ածխածնային հետքը նվազեցնելու նպատակով:

Թիրախի ելակետային տվյալները, հավակնոտությունն ու հենանիշերը

Թիրախի հավակնոտությունը որոշելու համար Sustainalytics-ը գնահատում է հետևյալը.
ա) արդյո՞ք թիրախը գերազանցում է այն մակարդակը, որը կլիներ, եթե Ընկերությունը շարունակեր զարգանալ սովորական տեմպերով,
բ) արդյո՞ք թիրախը ավելի բարձր է սահմանված, քան հեռահաղորդակցության ոլորտում գործընկեր ընկերությունների սահմանած նպատակները,
գ) ինչքանո՞վ է սահմանված թիրախը համապատասխանում գիտականորեն հիմնավորված մոտեցումներին

Տելեկոմ Արմենիան թիրախների հաշվարկման ելակետային տարի է սահմանել 2023 թվականը, քանի որ այս տարում Ընկերությունը հավաքագրել է ամբողջական և լիարժեք տվյալներ երկու ՀԿՑ-ների վերաբերյալ:

Թիրախ 1ա մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 1 և 2 -ի ՋԳ արտանետումները կրճատել 40%-ով 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցումը:

Sustainalytics-ը գնահատել է այս թիրախի հավակնոտությունը՝ հիմնվելով հեռահաղորդակցության ոլորտի գործընկերների կատարողականի և գիտության վրա հիմնված մոտեցումների վրա:

Տելեկոմ Արմենիան Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումների հաշվարկը սկսել է 2022 թվականից, երբ ունեցել է 18,423 tCO2e արտանետումներ: 2023 թվականին այս ցուցանիշը աճել է 6.33%-ով՝ հասնելով 19,559.1 tCO2e-ի:

Sustainalytics-ը վերլուծել է նաև Տելեկոմ Արմենիայի նմանությամբ թվով հինգ տարածաշրջանային համանման ընկերությունների սահմանած թիրախները: Ըստ Sustainalytics-ի, նշյալ ընկերությունները չեն կարողացել սահմանել չափելի և ժամանակային առումով հստակ թիրախներ, որոնք ուղղված կլինեին Շրջանակ 1 և 2 արտանետումների նվազեցմանը:

Գիտականորեն հիմնավորված դեկարբոնացման չափանիշների համեմատության համատեքստում Sustainalytics-ը Թիրախ 1ա-ն գնահատելու համար կիրառել է ԳՀԹՆ/SBTi (Գիտության Հիմնված Թիրախների Նախաձեռնություն) միջոլորտային բացարձակ նվազեցման մեթոդը:

ԳՀԹՆ/SBTi-ի մեթոդաբանության համաձայն՝ 1.5°C դեկարբոնացման ճանապարհին համապատասխանելու համար նվազագույնը 6% տարեկան կրճատման արագություն է անհրաժեշտ 2023 թվականի արտանետումների ելակետային մակարդակից:

Ընկերության սահմանած թիրախի հաշվարկը ենթադրում է, որ 2023-ից մինչև 2029 թվականը Շրջանակ 1 և 2 ջերմոցային գազերի արտանետումները պետք է կրճատվեն տարեկան 6.67%-ով:

Այս հիմքով Sustainalytics-ը եզրակացնում է, որ Թիրախ 1ա-ն համապատասխանում է 1.5°C դեկարբոնացման ուղուն՝ համաձայն ԳՀԹՆ/SBTi-ի միջոլորտային բացարձակ նվազեցման մեթոդի:

Թիրախ 1բ. մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները 2023 թվականի բազային ցուցանիշի համեմատ կրճատել 40%-ով, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը գնված ապրանքներից և ծառայությունների արտանետումների նվազեցումը 20%-ով:

Sustainalytics-ը գնահատել է այս թիրախի հավակնոտությունը՝ հիմնվելով հեռահաղորդակցության ոլորտի գործընկերների կատարողականի և գիտության վրա հիմնված մոտեցումների վրա:

Sustainalytics-ը հայտնում է, որ Ընկերությունը Շրջանակ 3 ՋԳ արտանետումների հաշվարկը սկսել է

2023 թվականից: Այս պատճառով Sustainalytics-ը չի կարող գնահատել Թիրախ 1բ-ի կատարողականը Ընկերության պատմական տվյալների համատեքստում:

Այլ ընկերությունների հետ համեմատության նպատակով Sustainalytics-ը վերլուծել է հեռահաղորդակցության ոլորտի հինգ տարածաշրջանային համանման ընկերությունների աշխատանքը: Ըստ Sustainalytics-ի, այս բոլոր գործընկեր ընկերությունները չեն սահմանել և հաղորդել քանակական թիրախներ հստակ ժամկետներով Շրջանակ 3 արտանետումների կրճատման համար ընդհանրապես:

Գիտականորեն հիմնավորված դեկարբոնացման չափանիշների համեմատության համատեքստում Sustainalytics-ը Թիրախ 1բ-ն գնահատելու համար կիրառել է ԳՀԹՆ/SBTi (Գիտության վրա Հիմնված Թիրախների Նախաձեռնություն) միջոլորտային բացարձակ նվազեցման մեթոդը:

ԳՀԹՆ/SBTi-ի մեթոդաբանության համաձայն՝ 1.5°C դեկարբոնացման ճանապարհին համապատասխանելու համար նվազագույնը 6% տարեկան կրճատման արագություն է անհրաժեշտ 2023 թվականի արտանետումների ելակետային մակարդակից[16]:

Ընկերության սահմանած թիրախի հաշվարկը ենթադրում է, որ 2023-ից մինչև 2029 թվականը Շրջանակ 3 ջերմոցային գազերի արտանետումները պետք է կրճատվեն տարեկան 6.67%-ով:

Այս հիմքով Sustainalytics-ը եզրակացնում է, որ Թիրախ 1բ-ն համապատասխանում է 1.5°C դեկարբոնացման ուղուն՝ համաձայն ԳՀԹՆ/SBTi-ի միջոլորտային բացարձակ նվազեցման մեթոդի և Թիրախ 1բ-ն գնահատում խիստ հավակնոտ:

16 ԳՀԹՆ/SBTi, "SBTi Կորպորատիվ ձեռնարկ (2021), հասանելի է՝ https://sciencebasedtargets.org/resources/files/Legacy-SBTi-Corporate-Manual-V2.0.pdf

Ընդհանուր գնահատում

Sustainalytics-ի կարծիքով Ընկերության սահմանած թիրախները համահունչ են Տելեկոմ Արմենիայի կայուն զարգացման ռազմավարությանը, իսկ Թիրախ 1ա-ն խիստ հավակնոտ է, քանի որ համահունչ է ԳՀԹՆ/SBTi 1.5°C նվազեցման սցենարի հետ՝ ըստ բացարձակ կրճատման միջոլորտային մեթոդի:

Ինչ վերաբերում է հեռահաղորդակցության ոլորտի գործընկեր ընկերությունների աշխատանքին, Sustainalytics-ը նշում է, որ Տելեկոմ Արմենիայի տարածաշրջանային գործընկերները չեն ներկայացրել Շրջանակ 1 կամ 2 ՋԳ արտանետումների կրճատման թիրախներ:

Sustainalytics-ը նաև համարում է Թիրախ 1բ-ն խիստ հավակնոտ, քանի որ այն ենթադրում է Շրջանակ 3 արտանետումների զգալի կրճատում, որը համահունչ է 1.5°C դեկարբոնացման հետագծին՝ ըստ ԳՀԹՆ/SBTi-ի միջոլորտային բացարձակ նվազեցման մեթոդի: Այս համատեքստում նույնպես Տելեկոմ Արմենիայի տարածաշրջանային գործընկերները չեն ներկայացրել Շրջանակ 3 ՋԳ արտանետումների կրճատման թիրախներ:

Թիրախ	Թիրախի հավակնոտության գնահատում			
Թիրախ 1ա մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 1 և 2 -ի ՋԳ արտանետումներ կրճատել 40%-ով 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցումը	Համապատասխանեցված չէ	Չափավոր հավակնոտ	Հավակնոտ	Խիստ հավակնոտ
Թիրախ 1բ. մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 3-ի ՋԳ արտանետումները 2023 թվականի բազային ցուցանիշի համեմատ կրճատել 40%-ով, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը գնված ապրանքներից և ծառայությունների արտանետումների նվազեցումը 20%-ով:	Համապատասխանեցված չէ	Չափավոր հավակնոտ	Հավակնոտ	Խիստ հավակնոտ

Պարտատոմսերի բնութագրերը

Շրջանակում ներկայացված պարտատոմսերի ֆինանսական բնութագրերը ուղիղ կապ ունեն Ընկերության սահմանած թիրախների հետ. որոշ իրադարձություններ կարող են հանգեցնել արժեկտրոնի 0,25% աճի կամ հավելավճարի վճարման: Նման իրադարձություններ են համարվում՝ ա) եթե նշյալ ժամկետում սահմանված թիրախին Ընկերությունը չի հասել բ) թիրախի կատարողականի մակարդակը հնարավոր չէ հաշվարկել կամ ներկայացնել, որն իր հերթին պիտի հավաստվի այլ՝ երրորդ գնահատողի կողմից գ) Տելեկոմ Արմենիան չի հրապարակել վերահսկողի կարծիք-հայտարարությունը շրջանակային փաստաթղթերում նշված ժամկետում:

Տելեկոմ Արմենիան նաև տեղեկացրել է Sustainalytics-ին, որ բոլոր ՀԿՑ-ները և սահմանված հարակից թիրախները վերաբերելի են Շրջանակի բոլոր պարտատոմսերի թողարկումներին:

Sustainalytics-ը համարում է, որ կայուն զարգացման պարտատոմսերի ֆինանսական բնութագրերը համահունչ են թողարկման սկզբունքներին, սակայն չի գնահատում թիրախին չհասնելու պարագայում ֆինանսական տույժի չափի և կառուցվածքի համարժեքությունը:

Հաշվետվողականություն

Տելեկոմ Արմենիան պարտավորվում է ՀԿՑ-ների և ձեռքբերված առաջընթացի մասին հաշվետվություն ներկայացնել յուրաքանչյուր տարի՝ համապատասխան ցուցանիշները ներառելով Ընկերության պաշտոնական վեբկայքում հրապարակված տարեկան հաշվետվություններում:

Այս հաշվետվությունը կներառի. ա) թարմացված տեղեկատվություն ընտրված ՀԿՑ-ների կատարողականի վերաբերյալ, ներառյալ ելակետային կամ բազային տարվա տվյալները բ) ստուգիչ, վերահսկողական հաշվետվություն, որը կկարագրի թիրախների նկատմամբ կատարողականը և ազդեցությունը պարտատոմսի ֆինանսական կամ կառուցվածքային բնութագրերի վրա, գ) ՀԿՑ-ների դինամիկայի վրա ազդող հիմնական որակական կամ քանակական գործոնների բացատրությունը դ) կատարողականի բարելավման ազդեցությունը կայունության վրա, ե) թիրախների ցանկացած վերաձևակերպում կամ ելակետային ցուցանիշների փոփոխություն կամ ՀԿՑ-ների շրջանակի ճշգրտումներ, և զ) տեղեկատվություն, որը ներդրողներին հնարավորություն կտա մշտադիտարկել թիրախների հավակնոտությունը: Հաշվետվություններ ներկայացնելու Ընկերության պարտավորությունը համապատասխանում է թողարկման սկզբունքներին:

Վերահսկողություն

Տելեկոմ Արմենիան պարտավորվում է ներգրավել արտաքին վերահսկող ընկերության, որը առնվազն տարին մեկ անգամ յուրաքանչյուր ՀԿՑ-ի և սահմանած թիրախի կատարողականի համար կիրականացնի անհրաժեշտ ստուգումներ: Վերահսկողի հաշվետվությունը կներկայացվի Ընկերության տարեկան հաշվետվության հետ համատեղ կամ որպես դրա մի մաս: Այս պարտավորությունները նույնպես համահունչ են թողարկման սկզբունքներին:

Բաժին 2: Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի կայուն ռազմավարության գնահատում

Տելեկոմ Արմենիայի Կայուն զարգացման ռազմավարության արժանահավատությունը

Տելեկոմ Արմենիա ԲՍԿ սկզբունքները ներառել է իր կայուն զարգացման ռազմավարության մեջ դեռ 2022թ-ից, որտեղ շեշտադրված են Ընկերության ՋԳ արտանետումների նվազեցման անհրաժեշտությունն ու շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու կարևորությունը: Որպես այս ռազմավարության մաս՝ Ընկերությունը 2029թ-ի համար սահմանել է հետևյալ բնապահպանական նպատակները ա) 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումները՝ միջանկյան թիրախ ունենալով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը կրճատել արտանետումները 20%-ով բ) մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ 40%-ով կրճատել Շրջանակ 3 ՋԳ արտանետումները՝ միջանկյալ թիրախ ունենալով 20%-ով նվազեցնել կատեգորիա 1-ի արտանետումները (գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումներ), և գ) ներդնել շրջանաձև տնտեսության սկզբունքները Ընկերության ռեսուրսների արդյունավետությունն ու էլեկտրոնային թափոնների կրճատումն ապահովելու համար: Ի լրումն, Տելեկոմ Արմենիան պարտավորվել է մինչև 2050 թվականը իր բոլոր գործառնությունները իրականացնել վերականգնվող էներգիայի աղբյուրների միջոցով՝ հասնելով զրոյական արտանետումների[17]

Ընկերությունը ձեռնարկել է միջոցառումներ՝ ՋԳ արտանետումների նվազեցման իր նպատակներին հասնելու համար, ներառյալ ցանցային գործառնությունների և տվյալների կենտրոնների սնուցման համար վերականգնվող էներգիայի աղբյուրներին անցումը՝ իր հաստատություններում տեղակայելով արևային կայաններ և ձեռք բերելով էլեկտրաէներգիա վերականգնվող աղբյուրներից, որի նպատակը արևային արտադրանքի տարեկան 10% աճ-ի ապահովումն է[18] 2023 թվականին Տելեկոմ Արմենիան իր գործող 25 արևային կայաններին ավելացրել է ևս ութը՝ մոտ 7%-ով ավելացնելով արևային էներգիայի սպառումը իր ընդհանուր էներգիայի սպառման մեջ՝ 2022 թվականի համեմատ [19]: Ընկերությունը նաև մտադիր է տարեկան 5%-ով ավելացնել էլեկտրական մեքենաների մասնաբաժինը իր ավտոպարկում և ընդլայնել էլ. լիցքավորման կայանների ցանցը [20] 2023 թվականի դրությամբ էլեկտրական մեքենաները կազմում էին Ընկերության ավտոպարկի 14%-ը, որոնց սպասարկում էին այդ թվում 50 լիցքավորման կայաններ Հայաստանի ողջ տարածքում[21]

Ընկերության ուղղակի ՋԳ արտանետումների նվազեցման մյուս նախաձեռնությունները ներառում են ա) բազային կայաններում և տեխնիկական տեղամասերում ներդնել սերտիֆիկացված էներգաարդյունավետ սարքավորումներ, վերազինել դրանք, անցում կատարել 5G տեխնոլոգիայի բ) շահագործումից հանել և անցում կատարել նոր տեխնոլոգիաների՝ պղնձե մալուխները փոխարինելով էներգաարդյունավետ օպտիկամանրաթելերով, ավանդական լամպերը՝ LED լուսավորությամբ, և գ) իրազեկել և վերապատրաստել Ընկերության աշխատակիցներին էներգախնայող գործելակերպի վերաբերյալ՝ վարչական շենքերում և գրասենյակներում էլեկտրաէներգիայի և ջրի սպառումը նվազեցնելու նպատակով[22]

Շրջանակ 3 ՋԳ արտանետումները նվազեցնելու և շրջանաձևությունը խթանելու նպատակով Տելեկոմ Արմենիան իրականացնում է իր բաժանորդների սարքերի, օրինակ երթուղիչների և Wi-Fi -ների վերադարձման և դրանց վերանորոգման, վերազինման միջոցառումներ, նպատակ ունենալով այդ թիվը բաժանորդագրությունն ավարտելուն պես հետագայում հասցնելու առնվազն 50%-ի [23]

Այս նախաձեռնության արդյունքում միայն 2023 թ.-ին Ընկերությունը կարողացել է խուսափել ավելի քան 14,000 միավոր էլեկտրոնային հեռահաղորդակցության սարքավորումների աղբավայրում հայտնվելուց, քանի որ դրանք վերանորոգվել և հանձնվել են կրկնօգտագործման [24]

Ընկերությունը, մատակարարման շղթայում ՋԳ արտանետումների նվազեցման նպատակով նախատեսում է սերտորեն համագործակցել իր բիզնես գործընկերների և մատակարարների հետ՝ իրականացնելու համար սեփական արտանետումների նվազեցման նախաձեռնություններ[25] Մասնավորապես, Տելեկոմ Արմենիան մտադիր է առաջնահերթություն տալ այն մատակարարներին, ովքեր կիրականացնեն սեփական արտանետումների նվազեցման նախաձեռնություններ: Ընկերությունը նաև մտադիր է մատակարարների հետ պայմանագրերում ներառել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրույթներ, որը կներառի նաև վերջիններիս արտանետումների վերաբերյալ տվյալների հանրայնացում, ինչպես նաև վաճառվող ապրանքների կենսացիկլի գնահատում[26]

Sustainalytics-ը համարում է, որ Ընկերության ներկայացրած Շրջանակը համահունչ է վերջինիս կայուն զարգացման ռազմավարությանը և կարծում է, որ այս Շրջանակով թողարկված պարտատոմսերը կշարունակեն աջակցել ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացմանը:

[17] Տելեկոմ Արմենիան իր կայուն զարգացման ռազմավարությունը ներկայացրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:

Տելեկոմ Արմենիայի բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարումը

Թեպետ Sustainalytics-ն համարում է, որ Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի կողմից սահմանված նպատակները ազդեցիկ են, միևնույն ժամանակ արձանագրում է, որ այդ թիրախներին հասնելը կարող է պարունակել բնապահպանական և սոցիալական ռիսկեր՝ կապված ա) տվյալների գաղտնիության և անվտանգության հետ[27] բ) պրոդուկտի կառավարման հետ[28] գ) մարդկային կապիտալի հետ[29] և դ) բիզնեսի էթիկայի հետ[30]

Ստորև ներկայացված են Sustainalytics-ի մեկնաբանությունները Տելեկոմ Արմենիայի կողմից նման հնարավոր ռիսկերը մեղմելու կարողության վերաբերյալ

- Տելեկոմ Արմենիան կառավարում է գաղտնիության և տվյալների անվտանգության հետ կապված ռիսկերը իր **Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության** միջոցով: Այս քաղաքականությունը սահմանում է տվյալների պաշտպանության շրջանակը և գործառնական ընթացակարգերը, որոնք վերաբերում են իր բոլոր բաժանորդների և աշխատակիցների անձնական տվյալների հավաքագրմանը, մշակմանը, պահպանմանը, փոխանցմանը և ոչնչացմանը[31]: Քաղաքականությունը կիրառվում է ընկերության բոլոր պրոդուկտների, ծրագրերի, կայքերի և մատուցվող ծառայությունների համար[32]:
- Տելեկոմ Արմենիան ստանձնել է հանձնառություն պատասխանատու կերպով վարվել տվյալների օգտագործման հետ, ինչպես նաև իր գործունեությամբ համապատասխանում է ՀՀ Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը, որը պահանջում է, տեղեկատվությունը մշակվի օրինական կերպով, կողմերի համաձայնությամբ և պաշտպանված լինի չթույլատրված մուտքերից [33,34]:
- Ընկերությունը հետևում է նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքին՝ ապահովելով փոխանցվող տվյալների գաղտնիությունը[35,36] : Ի լրումն Տելեկոմ Արմենիան ունի տեղեկատվական անվտանգության միջազգային ISO 27001 ռիսկերի արդյունավետ կառավարման հավաստագրում[37,38]:
- Բացի այդ, Ընկերության **Բիզնես Գործընկերների Վարքագծի Կանոնակարգը** պարտավորեցնում է գործընկերներին, մատակարարներին, դիստրիբյուտորներին և վաճառողներին պաշտպանել ինչպես Ընկերության, այնպես էլ բաժանորդների տվյալները՝ պահպանելով գաղտնիության և անվտանգության մասին գործող օրենքների պահանջները[39]
- Պրոդուկտի կառավարման, ներառյալ ցանցի հուսալիության և սպասարկման որակի առումով, Տելեկոմ Արմենիայի ծառայությունները՝ բջջային, ֆիքսված ինտերնետ, հեռախոսակապ և հեռուստատեսություն, մատուցվում են սեփական հաղորդման ցանցերի միջոցով[40]
- Ընկերությունն անընդհատ թարմացնում և ինտեգրում է իր տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը՝ բարձր հուսալիություն ապահովելու նպատակով[41]:
- Պրոդուկտի կառավարման, ներառյալ ցանցի հուսալիության և սպասարկման որակի առումով, Տելեկոմ Արմենիայի ծառայությունները՝ բջջային, ֆիքսված ինտերնետ, հեռախոսակապ և հեռուստատեսություն, մատուցվում են սեփական հաղորդման ցանցերի միջոցով[40]: Ընկերությունը շարունակաբար թարմացնում և ինտեգրում է իր տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը՝ հուսալիություն ապահովելու համար: Բազային կայանները պարբերաբար ստուգումներ են անցնում Ընկերության ԲԿ շահագործման և սպասարկման բաժնի կողմից՝ տեղացի ճարտարագետների կողմից, որն ապահովում է կապի անընդհատությունն ու կանխում չարտոնված մուտքերը: Բազային կայանների ստուգումների արդյունքները, ներառյալ հաշվետվությունները և մուլտիմեդիա փաստաթղթերը, փոխանցվում են տեխնիկական տնօրենին և համապատասխան ստորաբաժանումներին՝ ուղղիչ գործողություններ կատարելու և խնդիրները շտկելու նպատակով: Այս գործողություններն իրականացվում են սահմանված ժամկետներում, իսկ գործընթացը ԲՍԿ շրջանակնում վերահսկվում է Բնապահպանության և սոցիալական հարցերով փորձագետի կողմից [42]
- Մարդկային կապիտալի հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար Տելեկոմ Արմենիայի Վարքագծի կանոնանակարգը ուղեցույց է հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանության, բազմազանության խթանման և անվտանգ աշխատավայրի ապահովման վերաբերյալ[43] Ընկերությունն ունի աշխատավորների միավորումներ ստեղծելու ազատության, աշխատակիցների նկատմամբ իրավահավասար վերաբերմունքի և հավասար հնարավորությունների ընձեռման, խտրականության, անչափահասների և հարկադրված աշխատանքի, սեռական ոտնձգությունների և գենդերային հիմքով բռնությունն արգելող քաղաքականություններ, որոնք տարածվում են նաև մատակարարման շղթայի վրա[44,45]:

  Տելեկոմ Արմենիան մշակել է նաև բողոքների ներկայացման ներքին մեխանիզմ և Speak Up անանուն առցանց հարթակը, որտեղ աշխատակիցները, մատակարարները և ցանկացած այլ շահառու կարող է բողոքներ ներկայացնել Ընկերության գործունեության ընթացքում մարդու հիմնարար և աշխատանքային իրավունքների հետ կապված խնդիրների վերաբերյալ[46,47]:

  Աշխատանքի առողջության և անվտանգության ապահովման համար Ընկերությունը մշակել է Աշխատանքի առողջության և անվտանգության (ԱԱԱ) քաղաքականություն, որը ներառում է կրիտիկական ռիսկերի կանխարգելումը, աշխատանքի անվտանգության կազմակերպումը, միջադեպերի մասին հաղորդման և հետաքննության կարգերը, ինչպես նաև ղեկավարների և աշխատակիցների պարտադիր մասնակցությունը աշխատանքի առողջության և անվտանգության դասընթացներին[48] :Բացի այդ, Ընկերությունն ունի Հաստիքների կրճատման քաղաքականություն, որը պահանջվող կրճատումների ընթացքում ապահովում է անաչառ գործընթաց՝ հիմնված օբյեկտիվ չափանիշների վրա և կրճատվող աշխատակիցներին տրամադրում է անհրաժեշտ աջակցություն վերապատրաստման կամ այլ աշխատանք գտնելու հարցում[49]:
- Ինչ վերաբերում է բիզնես էթիկային, Տելեկոմ Արմենիայի Վաքագծի կանոնակարգը[50] ուրվագծում է փողերի լվացման, կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական սկզբունքներն ու քաղաքականությունը և սահմանում է վարքագծի

չափանիշներ, որոնք ակնկալվում են աշխատակիցներից և բիզնես գործընկերներից: Այս կանոնները ուղեցույց են հանդիսանում աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով Ընկերության արտադրանքի և ծառայությունների հնարավոր չարաշահումից բխող ռիսկերը կանխարգելելու հարցում: Ուղեցույցի պահանջներից են համապատասխանությունը տեղական օրենքներին և կանոնակարգերին, ՃՔՀ-ի ընթացակարգերի իրականացումը և կասկածելի գործունեության մասին հաղորդումը: Ընկերությունն ունի նաև Կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն, որն ուղղված է կոռուպցիայի և կաշառակերության հետ կապված ֆինանսական և հեղինակային ռիսկերի նվազեցմանը: Այս քաղաքականությունը ներառում է ընթացակարգեր պետական մարմինների և պետական պաշտոնյաների հետ փոխհարաբերությունների նվերների, զործարար հյուրասիրության, անվճար կամ զեղչված ծառայությունների և նախընտրելի հեռախոսահամարների տրամադրման, լրացուցիչ վճարների կատարման, լիազորված ներկայացուցիչների հետ հարաբերությունների, սոցիալական ներդրումներ և բարեգործական նվիրատվություններ կատարելու, հովանավորությունների, միաձուլումների ու ձեռքբերումների, ինչպես նաև՝ համատեղ ձեռնարկությունների ընթացակարգեր[51]

Speak Up հարթակը նաև ընձեռում է հնարավորություն բարձրաձայնել այս քաղաքականությունների խախտումների մասին[52]՝ ապահովելով այդպիսի վարքագծի մասին հայտնելու պատճառով հետապնդումից պաշտպանելու մեխանիզմներ և ուղիներ:

Sustainalytics-ը Տելեկոմ Արմենիայի գործունեության ընթացքում լուրջ բնապահպանական կամ սոցիալական խնդիրների ստեղծման ապացույցներ չի հայտնաբերել: Հիմնվելով Ընկերության այս քաղաքականությունների և գործելակերպի սկզբունքների վրա՝ Sustainalytics-ը համարում է, որ Տելեկոմ Արմենիան սահմանած թիրախներին հասնելու ճանապարհին ձեռնարկել է անհրաժեշտ միջոցառումներ իր բնապահպանական և սոցիալական ռիսկերը կառավարելու և մեղմելու տեսանկյունից:

18 Տե՛ս նույն տեղում
19 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Բնության մասին հոգալը սկսել ենք մեզնից-Թիմ Տելեկոմ Արմենիա», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/news/2024/04/22/caring-for-nature-we-have-started-with-ourselves-team-telecom-armenia/1018/
20 Տելեկոմ Արմենիան իր կայուն զարգացման ռազմավարությունը ներկայացրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:
21 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Բնության մասին հոգալը սկսել ենք մեզնից- Թիմ Տելեկոմ Արմենիա», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/news/2024/04/22/caring-for-nature-we-have-started-with-ourselves-team-telecom-armenia/1018/
22 Տելեկոմ Արմենիան իր կայուն զարգացման ռազմավարությունը ներկայացրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:
23 Տե՛ս նույն տեղում
24 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Բնության մասին հոգալը մենք սկսել ենք մեզնից՝ Թիմ Տելեկոմ Արմենիա», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/news/2024/04/22/caring-for-nature-we-have-started-with-ourselves-team-telecom-armenia/1018/
25 Տելեկոմ Արմենիան իր կայուն զարգացման ռազմավարությունը ներկայացրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:
26 Տե՛ս նույն տեղում
27 Sustainlytics-ի Տվյալների գաղտնիության և անվտանգության ՍԳՑ/MEI-ն կենտրոնանում է տվյալների կառավարման գործելակերպի վրա, ներառյալ այն, թե ինչպես են ընկերությունները հավաքում, օգտագործում, կառավարում և պաշտպանում տվյալները:
28 Sustainalytics-ի Պրոդուկտի կառավարման ՍԳՑ/MEI-ն կենտրոնանում է, թե ինչպես են ընկերությունները կատարում իրենց պարտականությունները հաճախորդների հանդեպ: Շեշտը դրվում է որակի կառավարման համակարգերի, շուկայավարման և գովազդման պրակտիկայի, վճարումների և վաճառքից հետո պատասխանատվության վրա:
29 Sustainalytics-ի Մարդկային կապիտալի ՍԳՑ/MEI-ն կենտրոնանում է հմուտ աշխատուժի սակավության, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների հետ կապված ռիսկերի կառավարման վրա, ինչպիսիք են խտրականության բացակայությունը, աշխատանքային ժամերը և նվազագույն աշխատավարձը:
30 Sustainalytics-ի Բիզնես էթիկայի ՍԳՑ/MEI -ն կենտրոնանում է բիզնեսի էթիկական նկատառումների կառավարման վրա, որոնք կիրառելի են ոլորտների մեծամասնության կամ բոլոր ոլորտների համար, ինչպիսիք են հարկային և հաշվապահական հաշվառումը, հակամրցակցային գործելակերպը և մտավոր սեփականության հարցերը
31 «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գաղտնիության քաղաքականություն», հասանլի է՝ https://www.telecomarmenia.am/en/privacy-policy
32 Տե՛ս նույն տեղում
33 Հայկական իրավական տեղեկատվական համակարգ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=117034
34 «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գաղտնիության քաղաքականություն», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/privacy-policy
35 Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=117043
36 «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գաղտնիության քաղաքականություն», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/privacy-policy
37 Տելեկոմ Արմենիան իր ISO 27001 հավաստագրման մասին տեղեկատվությունը փոխանցել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով:
38 ISO, «ISO/IEC 27001:2022 Տեղեկատվական անվտանգություն, կիբերանվտանգություն և գաղտնիության պաշտպանություն – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր – Պահանջներ», հասանելի է՝ https://www.iso.org/isoiec-27001-information-security.html
39 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գործընկերների վարքագծի կանոնակարգ», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/file_manager/BP_COC_ENG.pdf
40 Տելեկոմ Արմենիա, «2023 Տարեկան զեկույց» https://www.telecomarmenia.am/en/results-reporting/
41 Տելեկոմ Արմենիա, «2023 Տարեկան զեկույց» https://www.telecomarmenia.am/en/results-reporting/
42 Համայնքի առողջության և անվտանգության կառավարման պլանը Sustainlytics-ին ուղարկվել է ոչ հրապարակային հիմունքներով
43 Վարքագծի կանոնները Տելեկոմ Արմենիայի կողմից Sustainlytics-ին տրամադրվել է ոչ հրապարակային հիմունքներով
44 Տելեկոմ Արմենիան Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով տրամադրել է հետևյալ ներքին քաղաքականությունները. ա) Խտրականության կանխարգելման և հավասար հնարավորությունների քաղաքականություն բ) Աշխատողների միավորումներ ստեղծելու ազատության քաղաքականություն գ) Երեխաների աշխատանքի կանխարգելման քաղաքականություն.դ) Հարկադիր աշխատանքի կանխարգելման քաղաքականություն. ե) Սեռական ոտնձգության քաղաքականություն. և զ) Գենդերային հիմքով բռնության կանխարգելման քաղաքականություն:
45 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Կայուն զարգացում», հասանելի է՝ https://www.telecomarmenia.am/en/sustainable-development/
46 «Թիմ Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Speak-Up» թեժ գիծ, հասանելի է՝ https://speakup.telecomarmenia.am/en/
47 Տելեկոմ Արմենիան Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով տրամադրել է Մտահոգությունների բարձրաձայնման քաղաքականությունը
48 Տելեկոմ Արմենիան Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով տրամադրել է Առողջության ապահովման և աշխատանքի անվտանգության քաղաքականությունը
49 Տելեկոմ Արմենիան իր Հաստիքների կրճատման քաղաքականությունը տրամադրել է Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով
50 Տելեկոմ Արմենիան իր Վարքագծի կանոնները Sustainalytics-ին տրամադրել է ոչ հրապարակային հիմունքներով
51 Տելեկոմ Արմենիան իր Կոռուպցիայի և կաշառակերության դեմ քաղաքականությունը Sustainalytics-ին տրամադրել է ոչ հրապարակային հիմունքներով
52 Տելեկոմ Արմենիան Sustainalytics-ին ոչ հրապարակային հիմունքներով տրամադրել է Մտահոգությունների բարձրաձայնման քաղաքականությունը

Բաժին 3: Թիրախների ազդեցիկությունը

ՋԳ արտանետումների նվազեցման կարևորությունը ՏՀՏ ոլորտում

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի էներգասպառումը 2020 թվականին կազմել է համաշխարհային էլեկտրաէներգիայի սպառման մոտ 4%-ը և ջերմոցային գազերի (ՋԳ) համաշխարհային արտանետումների 1.4%-ը [53]:

2022 թվականին հեռահաղորդակցության օպերատորները արտանետել են 33 միլիոն տոննա CO_2-ին համարժեք ջերմոցային գազեր (Շրջանակ 1 և 2), ինչը կազմում է ՋԳ համաշխարհային արտանետումների 0.4%-ը [54]: Չնայած ցանցային ենթակառուցվածքները դառնում են ավելի էներգաարդյունավետ՝ փոխանցվող տվյալների մեկ միավորի հաշվով, նոր սերնդի բջջային ենթակառուցվածքի հզորությունն ու արագությունը, ինչպես նաև տվյալների տրաֆիկի արագ աճը կանխատեսում են էներգիայի սպառման ավելացում ցանցի թողունակության ընդլայնմանը զուգահեռ [55]:

Ըստ գնահատումների՝ բջջային տվյալների տրաֆիկը 2022-ից 2028 թվականների ընթացքում կաճի տարեկան 26%-ով, ինչը կհանդիսանա լուրջ մարտահրավեր ոլորտի ՋԳ արտանետումների նվազեցման համար [56]

ՏՀՏ ոլորտը մինչև 2050 թվականը նախատեսում է իր ՋԳ արտանետումները հասցնել զրոյական մակարդակի[57] Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ICT), համագործակցելով Բջջային օպերատորների Համաշխարհային Միության հետ (GSMA), Գլոբալ կայունության նախաձեռնության (Global Enabling Sustainability Initiative) և Գիտության վրա հիմնված Թիրախների նախաձեռնության (ԳՀԹԼ/SBTi) հետ, մշակել են ոլորտի ՋԳ արտանետումների նվազեցման ճանապարհային քարտեզ, որը կօգնի ՏՀՏ ընկերություններին սահմանել գիտականորեն հիմնավորված կլիմայի փոփոխության նվազեցման թիրախներ[58]

Ըստ SBTi -ի, 2020 -2030թթ. ընթացքում հեռահաղորդակցության ոլորտում 1.5C -ին համապատասխան ՋԳ արտանետումները էականորեն նվազեցնելու և համար, անհրաժեշտ է ի թիվս այլոց՝ ա) մշակել և պարբերաբար իրականացնել էներգաարդյունավետության պլաններ բ) անցում կատարել վերականգնվող էներգիայի կամ ցածր ածխածնային տարբերակով արտադրված էլեկտրաէներգիայի աղբյուրների գ) բարձրացնել վերջնական սպառողների իրազեկվածությունը կլիմայի փոփոխության վերաբերյալ[59]

Հաշվի առնելով վերոգրյալը, Sustainalytics-ը համարում է, որ Տելեկոմ Արմենիայի ձեռնարկված քայլերը ուղղված Շրջանակ 1, 2, 3 ՋԳ արտանետումները կրճատելուն, կնպաստեն Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանը, ինչպես նաև կաջակցեն գլոբալ տաքացումը մինչև 1,5°C սահմանափակելու Փարիզի համաձայնագրի հանձնառությանը:

53 Էրիքսոն, «Կայունություն և ՏՀՏ», հասանելի է՝ https://www.ericsson.com/en/reports-and-papers/mobility-report/dataforecasts/ict-sustainability
54 Համաշխարհային բանկ և Հեռահաղորդակցության միջազգային միություն, «ՏՀՏ ոլորտի արտանետումների և ազդեցության չափում. հետևանքներ կլիմայական գործողությունների համար» (2024), հասանելի է՝ https://documents1.worldbank.org/curated/en/099121223165540890/pdf/P17859712a98880541a4b71d57876048abb.pdf
55 Տե՛ս նույն տեղում
56 Տե՛ս նույն տեղում
57 GSMA «ՏՀՏ արդյունաբերությունը համաձայնեցնում է զրոյական արտանետումների հասնելու գիտության վրա հիմնված ուղենիշը» (2020), հասանելի է՝ https://www.gsma.com/newsroom/press-release/ict-industry-agrees-landmark-science-based-pathway-to-reach-net-zero-emissions/
58 Գիտության վրա հիմնված թիրախներ «Ուղեցույց գիտության վրա հիմնված թիրախներ սահմանող ՏՀՏ ընկերությունների համար», հասանելի է՝ https://www.itu.int/en/action/environment-and- climate-change/Documents/20200227-Guidance-ICT-companies-report.PDF
59 Տե՛ս նույն տեղում

Թիրախներին հասնելու ազդեցությունը ԿԶՆ-երի նկատմամբ

Կայուն զարգացման նպատակներն ընդունվել են 2015 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից և մինչև 2030 թվականը կայուն զարգացման հասնելու օրակարգի մաս են հանդիսանում: Ակնկալվում է, որ Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկումը կնպաստի հետևյալ ԿԶՆ-ների և թիրախներին հասնելուն.

ՀԿՑ	ԿԶՆ	ԿԶՆ թիրախ
ՀԿՑ 1ա Շրջանակ 1 և 2 ԶԳ արտանետումներ	7. Մատչելի և մաքուր էներգիա	7.2 Մինչև 2030 թվականը զգալիորեն մեծացնել վերականգնվող էներգիայի աղբյուրների տեսակարար կշիռը համաշխարհային էներգետիկ հաշվեկշռում: 7.3 Մինչև 2030 թվականը կրկնապատկել էներգաարդյունավետության ապահովման համաշխարհային տեմպերը:
	9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ	9.4 Մինչև 2030 թվականը արդիականացնել ենթակառուցվածքները և վերազինել արդյունաբերությունները՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մաքուր ու էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ընդլայնված կիրառման միջոցով՝ յուրաքանչյուր երկրի հնարավորությունների սահմաններում անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելով:
ՀԿՑ 1բ Շրջանակ 3 ԶԳ արտանետումներ	9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ	9.4 Մինչև 2030 թվականը արդիականացնել ենթակառուցվածքները և վերազինել արդյունաբերությունները՝՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մաքուր ու էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ընդլայնված կիրառման միջոցով՝ յուրաքանչյուր երկրի հնարավորությունների սահմաններում անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելով:

Եզրակացություն

Տելեկոմ Արմենիան նախատեսում է թողարկել կայուն զարգացման պարտատոմսեր, կապելով վերջիններիս ֆինանսական հատկանիշները, ինչպիսիք են՝ արժեկտրոնների ճշգրտումները կամ հավելյալ վճարումները հետևյալ թիրախներին հասնելու հետ:

1. Թիրախ 1ա մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 1 և 2 -ի ԶԳ արտանետումները կրճատել 40%-ով 2023 թվականի ելակետային ցուցանիշի համեմատ, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցումը:

2. Թիրախ 1բ մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը Շրջանակ 3-ի ԶԳ արտանետումները 2023 թվականի բազային ցուցանիշի համեմատ կրճատել 40%-ով, միջանկյալ թիրախ սահմանելով մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը գնված ապրանքներից և ծառայությունների արտանետումների նվազեցումը 20%-ով:

Sustainalytics-ը Ընկերության սահմանած ՀԿՑ-ներ 1ա-ն և 1բ-ն համարում է **շատ ազդեցիկ**՝ վերջիններիս էականությունից, համապատասխանությունից, կիրառելիությունից և համադրելիությունից ելնելով:

Sustainalytics-ը Ընկերության սահմանած Թիրախներ 1ա-ն և 1բ-ն համարում է **խիստ հավակնոտ**՝ հիմնվելով հեռահաղորդակցության ոլորտի գործընկերների կատարողականի և գիտականորեն հիմնավորված մոտեցումների վրա:

Ի լրումն, Sustainalytics-ը համարում է, որ Ընկերության հաշվետվությունների ներկայացման և վերահսկողության հանձնառությունները համապատասխանում են Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման 2024թ. սկզբունքներին:

Վերոնշյալից ելնելով՝ Sustainlytics-ը համարում է, որ Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը համահունչ է Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման 2024թ. սկզբունքների հինգ հիմնական բաղադրիչներին Կայունության հետ կապված պարտատոմսերի սկզբունքներ 2024-ին, իսկ թիրախներին հասնելու պարագայում դրանք համարում է ոլորտի վրա բարձր ազդեցություն ունեցող:

Հրաժարում պատասխանատվությունից

Հեղինակային իրավունք ©2024 Sustainalytics, Morningstar ընկերություն: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այստեղ պարունակվող կամ արտացոլված տեղեկատվությունը, մեթոդաբանությունը, տվյալները և կարծիքները հանդիսանում են Sustainalytics-ի և/կամ դրա բովանդակություն ստեղծող գործընկերների սեփականությունը և կարող են երրորդ կողմերին տրամադրվել միայն Sustainalytics-ի կողմից նախապես սահմանված ձևով և ձևաչափով:

Այս տեղեկատվությունը նախատեսված չէ Հնդկաստանում բնակվող հաճախորդների կամ օգտագործողների կողմից տարածման կամ օգտագործման համար, և դրա տրամադրումն Հնդկաստանում բնակվող անձանց կամ կազմակերպություններին արգելվում է:

Դրանք տրամադրվում են միայն տեղեկատվական նպատակներով և՝

1. Չպետք է դիտարկվեն որպես հայտարարություն, ներկայացում, երաշխիք կամ փաստարկ՝ հօգուտ կամ ընդդեմ որևէ փաստի կամ հայտարարությունների, որոնք թողարկողը տրամադրել է Sustainalytics-ին ՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որոնցում նման փաստերն ու հայտարարությունները ներկայացվել են:
2. Չեն հանդիսանում որևէ արտադրանքի, նախագծի, ներդրումային ռազմավարության հաստատում կամ որևէ կոնկրետ բնապահպանական, սոցիալական կամ կառավարման խնդիրների վերլուծություն՝ որպես ներդրումային ռազմավարության մաս:
3. Չեն հանդիսանում ներդրումային խորհրդատվություն, ֆինանսական խորհրդատվություն կամ ազդագիր, ինչպես նաև «փորձագիտական կարծիք» կամ «բացասական հավաստիացում», ինչպես դա ընդհանուր առմամբ հասկացվում կամ սահմանվում է գործող օրենքներով:
4. Որևէ առաջարկի մաս չեն կազմում և չեն հանդիսանում արժեթղթեր գնելու կամ վաճառելու, նախագծի ընտրության կամ որևէ բիզնես գործարքի մեջ ներգրավվելու առաջարկ կամ ցուցում:
5. Չեն հանդիսանում թողարկողի տնտեսական գործունեության, ֆինանսական պարտավորությունների կամ վարկունակության գնահատում:
6. Չեն փոխարինում մասնագիտական խորհրդատվությանը:
7. Անցյալի կատարողականը ապագա արդյունքի երաշխիք չի հանդիսանում:
8. Չեն ներկայացվել և չեն հաստատվել որևէ համապատասխան կարգավորող մարմնի կողմից:
9. Չեն ներառվել և չեն կարող ներառվել որևէ առաջարկի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ գրավոր սահմանվել են

Այս արդյունքները, մասնավորապես՝ տեքստը, գրաֆիկան, պատկերները ինչպես նաև դասավորությունը և Sustainalytics-ի պատկերանշանը, պաշտպանված են հեղինակային իրավունքի և ապրանքային նշանների մասին օրենքներով: Դրանց ցանկացած օգտագործումը պահանջում է նախնական գրավոր համաձայնություն:

Օգտագործումը ներառում է, սակայն չի սահմանափակվում՝

- կարծիքի ամբողջական կամ մասնակի պատճենմամբ կամ կրկնօրինակմամբ,
- կարծիքի տարածմամբ՝ լինի դա անվճար կամ վճարովի,
- կամ վերջինիս օգտագործմամբ ցանկացած այլ հնարավոր ձևով:

Թողարկողը լիովին պատասխանատու է իր պարտավորությունների կատարման ստուգման, ապահովման, իրականացման և մշտադիտարկման համար:

Morningstar Sustainalytics-ի մասին

Morningstar Sustainalytics-ը առաջատար ընկերություն է, որը մասնագիտացած է բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) հետազոտությունների, վարկանիշների և տվյալների հավաքագրման ոլորտում: Այն աջակցում է ներդրողներին ամբողջ աշխարհում պատասխանատու ներդրումային ռազմավարությունների մշակման և իրականացման հարցում:

Ավելի քան 30 տարի Sustainalytics-ը եղել է ոլորտի առաջնագծում՝ մշտապես առաջարկելով բարձրորակ և նորարարական լուծումներ, որոնք նախատեսված են ներդրողների փոփոխվող կարիքները բավարարելու համար: Այսօր ընկերությունը համագործակցում է հարյուրավոր առաջատար ակտիվների կառավարիչների և կենսաթոշակային հիմնադրամների հետ, որոնք իրենց ներդրումային գործընթացներում ներառում են ԲՍԿ և կորպորատիվ կառավարման վերաբերյալ տեղեկատվություն և գնահատականներ:

Sustainalytics-ը նաև համագործակցում է հարյուրավոր ընկերությունների և նրանց ֆինանսական միջնորդների հետ՝ ներառելու համար կայուն զարգացման սկզբունքները իրենց քաղաքականության, պրակտիկայի և կապիտալ նախագծերում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ՝ www.susTainalyTics.com.

GlobalCapital
Bond Awards
Recognising the best in bonds, chosen by the market
WINNER
Best Second Party Opinion Provider for SSA ESG Bonds
GlobalCapital

GlobalCapital
Bond Awards
Recognising the best in bonds, chosen by the market
WINNER
Best Second Party Opinion Provider for EM ESG Bonds
GlobalCapital

GlobalCapital
Bond Awards
Recognising the best in bonds, chosen by the market
WINNER
Best Second Party Opinion Provider for Corporate ESG Bonds
GlobalCapital

SUSTAINALYTICS
Climate Bonds
MORNINGSTAR SUSTAINALYTICS
wins the Largest Verifier for Certified Climate Bonds at the 8th Climate Bonds Awards

SUSTAINABLE CAPITAL MARKETS AWARDS 2021
THE Asset

Environmental Finance
Bond Awards
2021
Winner
External assessment provider of the year

Environmental Finance
IMPACT
Awards 2021
Winner
Award for impact research